

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

Գլուխ վեցերորդ

ԳԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Գրություն չունեցող մարգարեներեն թեև երեքը միայն անցած են օրացույցի, բայց պետք է գիտնալ թե ասոնցմե զատ Հին Կտակարանի մեջ դեռ կան շատ մը ուրիշներ, որոնք մարգարե կոչված և մարգարեի դեր կատարած են: Ասոնցմե են, օրինակ, Նաթան և Գատ մարգարեները, Դավիթ Թագավորի օրով. մինչև իսկ Ողդա կին մարգարեուհի մը Հովսիա թագավորի օրով (Դ Թագ. ԻԲ 14—20): Ասոնց գործունեությունը ընդարձակ չըլլալուն չեն անցած օրացույցի, այլապես ասոնք ալ այնքան Աստուծո հավատարիմ և արդար անձեր են, որքան օրացույցի անցածները:

Իսկ իրեն անունով գիրք ունեցող մարգարեները ամբողջությամբ անցած են օրացույցի: Ասոնք թիվով 16 են, որոնցմե չորսը ծանոթ են իբրև «Մեծ մարգարեներ», իսկ տասներկուքը՝ «փոքր մարգարեներ»: Այս անվանակոչումները տրված են անոնց՝ ավելի իրենց գիրքերու ծավալին հարաբերաբար քան թե անոնց գործունեության համար:

Արդարև «Մեծ մարգարեներ»ու առաջին երեքին գիրքերը Աստվածաշունչին մեծագույններն են Սաղմոսաց Գրքեն հետո. իսկ փոքրերեն ոմանց գիրքերը մեկ կամ երկու էջնոց գրություններ են, ըլլալով այսպես փաքրագույններեն՝ ամբողջ Հին Կտակարանին: Կսկսինք չորս մեծերեն:

25.—ԵՍԱՅԻ

Կմարգարեանա 8-րդ դարու կեսերեն, լման կես դար մը: Ծնած է և գրեթե ամբողջ կյանքը անցուցած է Երուսաղեմի մեջ: Ամուսնացած մարդ է և ունի զավակներ:

Մարգարեական իր կոչումը նկարագրված է իր գրքին մեջ ըստ հետևյալի.

«Այն տարին, որ Ոզիա (Երուսաղեմի) թագավորը մեռավ, տեսա Տերը բարձր և վեհ աթոռի մը վրա բազմած և Անոր փառքը լեցուցած էր տաճարը: Անոր շուրջը կային սպասարկող սերովբեներ, յուրաքանչյուրը վեցական թևերով... Ու անոնք անդուլ անդադար իրարու ձայն կուտային ըսելով.

Սուրբ, սուրբ, սուրբ է Զորությանց Տերը.
Անոր փառքով լեցուն է ամբողջ երկիրը:

Ասոնց ձայնին ուժգնությենեն բացվեցան տաճարի դռները և տունը լեցվեցավ Աստուծո ներկայությունը խորհրդանշող ծուխով. ու ես գոչեցի.

Վայ ինձի, թշվառականիս, ես կորա.
Որովհետև մարդ մըն եմ պիղծ շրթներով
Ու կապրիմ պղծաշուրթ ժողովուրդի մեջ.
Եվ Զորությանց Տերը տեսա բաց աչքերով:

Այն ատեն ղրկվեցավ ինձի սերովբենե-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից, 1978 թվականի № № Ա—Գ-ից և 1979 թվականի № № Բ-ից և Դ—Զ-ից:

րեն մեկը, որ ունելիով վերցուց Տիրոջ սեղանեն կրակե կայծ մը և դպցուց զայն շրթներուս, ըսելով.

Ահավասիկ սա դպավ շրթունքներուդ
Ու վերցվեցան քեզմե անօրենություններդ,
Եվ սրբվեցան մեղքերդ:

Այն ատեն լսեցի որ Տերը կըսեր. Ով ղրկեմ, կամ ով երթա այս ժողովուրդին: Ու ես ըսի. ահավասիկ ես պատրաստ եմ, ղրկե զիս: Ու Տերը ըսավ.

«Գնա եվ ըսե այս ժողովուրդին.
Լսելով պիտի լսեք, բայց պիտի չհասկնաք.
Տեսնելով պիտի տեսնեք, բայց պիտի
չգիտնաք.
Որովհետև այս ժողովուրդին սիրտը
թմրած է.
Իրենց ականջները ծանրացած են, և
աչքերը՝ կուրցած.
Այնպես որ չեն կրնար տեսնել իրենց
աչքերով,
Ու չեն կրնար լսել իրենց ականջներով,
Ոչ ալ հասկնալ՝ իրենց սիրտերով.
Որպեսզի դառնան ու բժշկեմ զանոնք»:

Պատգամ մը, որ կպատշաճի գրեթե բոլոր ժամանակներուն. բայց հատկապես մեր ժամանակներուն...: Վերևի տեսիլքեն Եսայի ժառանգած է «կայծակնամաքուր մարգարե» տիտղոսը մեր եկեղեցական շրջանակներու մեջ:

Եսայի վարիչ և առաջնորդ եղած է իր օրերուն Երուսաղեմի չորս թագավորներուն, հատկապես Եզեկիա բարեպաշտ թագավորին: Ասոր օրով Ասորեստանի թագավոր Սենեքերիմ գրաված է գրեթե ամբողջ Հրեաստանը և կսպառնա նաև Երուսաղեմին: Եզեկիա տագնապի մատնված պատգամավոր կղրկե Եսայիին և խորհուրդ կըհարցնե անոր: Կըսե Եսային.

«Պիտի չմտնե Ասորեստանի թագավորը այս քաղաքը. ոչ իսկ նետ պիտի արձակե անոր վրա. ոչ ալ պիտի պաշարե զայն պատնեշներով. այլ եկած ճամբով պիտի վերադառնա և այս քաղաքը պիտի չմտնե»: Ու արդարև ժանտախտ մը կբնաջնջե Սենեքերիմի բանակը, և ինք հազիվ կհասնի իր երկիրը, ուր կսպաննվի իր երկու զավակներուն՝ Ադրամելիքի և Սարասարի կողմե, որոնք կփախին «Արարատի երկիրը» (Ես. ԼԷ 33—38):

Եսային այն մարգարեն է, որ ամենեն շատ մարգարեացած է Մեսիայի՝ այսինքն Քրիստոսի մասին. այն աստիճան որ կոչված է «նախավետարանիչ» կամ «Ավետարանիչ մարգարե»: Օրինակ, այն է ըսողը. «Ահա կույս մը պիտի հղանա և որդի մը պիտի ծնի և անոր անունը Էմմանուել պիտի կոչեն»: Ակնարկելով Քրիստոսի գործունեության աշխարհագրական շրջանակին՝ ըսած է. «Զաբուղոնի և Նեփթաղիմի երկրին մեջ և ծովեզերքը բնակողները, Անդրհորդանանի և հեթանոսներու Գալիլիո մեջ ապրողները, որոնք խավարի մեջ կքալեին, մեծ լույս մը տեսան» (Ես. Թ 1): Հիսուս երբ Նազարեթի ժողովարանին մեջ կարդաց Եսայի ԿԱ 1—3 համարները, հաստատեց որ անոնք իր վրա իրականացած էին: Երբեմն գրեթե բառ առ բառ նախատեսված են Քրիստոսի կատարելիք դերը, տնօրենությունները և չարչարանքները անոր Գրքին մեջ:

Եսային ազնվական մարգարե մըն է բառին բովանդակ իմաստով: Կխոսի և կըպատգամե վեհությամբ և ուժեղ հեղինակությամբ, ինչպես կվայելե արդարև Բարձրյալի դեսպանին: Մշակված միտք մըն է, և Աստվածաշունչի բարձրագույն իմացականություններեն մեկը: Կհասկնա գրեթե բոլոր խնդիրներե, որքան կրոնական՝ նույնքան քաղաքական: Հաճախ կոչված է «դիվանագետ» կամ «քաղաքագետ» մարգարե: Մոտեն հետաքրքրված՝ և իր տեսակետը կամ Աստուծո կամքը հայտնած է ժամանակակից միջազգային և ազգային հարցերու մասին: Շատ մոտ եղած է արքունական շրջանակներու. և հավանական է ենթադրել որ պատվո մաս կազմած է Երուսաղեմի արքունի խորհուրդին, որ կճշդեր երկրին քաղաքական ուղղությունը հարաբերաբար ժամանակակից մեծ պետություններու:

Եսայիի Գրքին 66 գլուխները օվկիանոս մըն են պատգամներու՝ բազմաթիվ նյութերու մասին. Աստուծո, Արդարության, մեղքի, կրոնքի և ընկերային շատ մը ուրիշ հարցերու մասին, որոնցմե ոմանք բարձրագույններեն են ամբողջ Հին Կտակարանին, տրված երբեմն անգերազանցելի ոճով և համամարդկային ոգիով: Օղակն է Եսայիի Գիրքը Հին Կտակարանին և Նորին միջև: Ավանդաբար կկարծվի որ աղոցումով նահատակված է Մանասե ամբարիշտ թագավորին կողմե: Եսայի կտոնվի առանձինն, Վարդավառի հաջորդող հինգշաբթիին:

Հույնք կհիշատակեն մայիս 9-ին: Իսկ լատինք՝ հուլիս 6-ին:

26.—ԵՐԵՄԻԱ

Աստվածաշունչի ուրիշ մեծագույն դեմ-

քերեն մեկն է նաև Երեմիա մարգարեն: Ս. գրական դեմքերեն քիչերու մասին այնքան շատ ու այնքան վավերական տեղեկություններ ունինք—հատկապես իր ներաշխարհին և հոգեկան ապրումներուն—որքան իր մասին, գրված ուղղակի իր գրչեն:

Ծնած է նախ քան Քրիստոս 650-ական թվականներուն, Երուսաղեմեն ոչ շատ հեռի Անաթովթ գյուղը: Թեև սերած է քահանայական գերդաստանե բայց երբեք քահանայագործություն չէ ըրած. ընդհակառակը ձաղկած է անոնց կենցաղը և բախումներ ունեցած՝ անոնց հետ: Իր գործունեությունը և քարոզությունը տեղի ունեցած է Երուսաղեմի մեջ, մինչև այս քաղաքին անկումը: Երեմիայի կոչումը տեղի ունեցած է հետևյալ պայմաններու ներքև ըստ իր վկայության.

«Տիրոջ խոսքը ինձի ուղղվեցավ այսպես. Որովայնի մեջ տակավին դուն չէիր կազմավորված՝ երբ կճանչնայի քեզ. և արգանդե չելած սրբեցի քեզ, և ազգերու մարգարե նշանակեցի: Ու ես ըսի. Ախ, Տեր, ես խոսիլ անգամ չեմ գիտեր, մինչև իսկ դեռ մանուկ եմ: Տերը պատասխանեց. մի ըսեր թե մանուկ եմ ես. որովհետև պիտի երթաս բոլոր անոնց, որոնց պիտի ղրկեմ քեզ. և ինչ որ պատվիրեմ քեզի պիտի խոսիս զայն: Մի վախնար մարդոցմե. ես քեզի հետ եմ և պիտի փրկեմ քեզ:

«Եվ Տերը երկարեց իր ձեռքը ինձի և դպավ բերանիս ու ըսավ. «Ահավասիկ իմ խոսքս դրի քու բերանդ. ահավասիկ այսօր հեղինակություն տվի քեզի ազգերու և թագավորներու վրա՝ խլելու և բրելու, քակելու և հիմնահատակ ընելու, շինելու և տնկելու» (Երեմ. Ա 4—10): Բայց մյուս կողմեն գիտցած ըլլաս, ավելցուց աստվածային ձայնը, որ թագավորներ և իշխաններ, քահանաներ և ժողովուրդը պիտի պայքարին քեզի դեմ, բայց պիտի չկրնան հաղթահարել քեզի. վասնզի ես քեզի հետ եմ և պիտի ազատեմ քեզ բոլոր փորձանքներե:

Արդարև Երեմիայի կյանքը տառապես իրականացումը եղավ աստվածային այս պատգամին. քիչեր այնքան շատ տառապած են որքան Երեմիա, թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես: Քիչեր այնքան անժողովրդական ու իր սրտին հակառակ պատգամներ հարկադրված են տալ, որքան Երեմիա:

Հակառակ երիտասարդ տարիքին կոչված ըլլալուն, կամ այդ իսկ պատճառով, ուժգնորեն և սրտովին կապվեցավ իր մարգարեական կոչումին, հրաժարելով ընտանիք կազմելու պարտավորությունեն և կյանքի բոլոր հաճույքներեն:

Երբ իր ժողովուրդը անսրբագրելիորեն ինկած էր կռապաշտության և ընկերային անարդարությանց՝ նախատեսեց Երուսաղեմի և տաճարի կործանումը. այս իսկ պատճառով նետեցին զայն ջրհոր մը, որուն ջուրը թեև ցամքած՝ բայց հատակը լեցված էր ցեխով: Օրեր վերջ պալատականներեն մեկին բարեխոսությամբ հանվեցավ հորեն:

Բաբելաստան զորացած էր և գրաված շրջակա երկիրները մինչև Հրեաստան, ու իր բանակները եկած պաշարած էին Երուսաղեմը: Երեմիա նախատեսելով որ դատապարտված էր Երուսաղեմ քաղաքը՝ կհանձնարարե անձնատուր ըլլալ և բաբելացվող բարեկամությունը մշակել ընդդեմ Եգիպտոսի: Օրվան թագավորը ոչ միայն մտիկ չընրավ այլ նաև չարչարեց ու բանտարկեց զայն: Երբ քաղաքը գրավվեցավ 586-ին, Նաբուգոդոնոսորի կողմե, Երեմիա բանտի մեջ էր: Նաբուգոդոնոսոր իմանալով անոր քաղաքական ուղղությունը ազատ արձակեց զայն, և առաջարկեց պատվով Բաբելոն տանիլ զինք: Երեմիա նախընտրեց մնալ իր ժողովուրդի «աղքատ» մնացորդացին հետ: Սակայն երբ անուղղա ըմբոստներ սպաննեցին Բաբելոնի թագավորին նշանակած կառավարիչը, և գիտնալով իրենց գլխին գալիքը, իրենք կփախչեին Եգիպտոս՝ ծերացած Երեմիան ալ բռնի իրենց հետը տարին, ուր մեռավ Աստուծո տառապած այս ծառան, ըստ ավանդության քարկոծվելով իր ժողովուրդեն, որուն անօրենությունները շարունակ իրենց աչքին առջև դնելը իրեն համար Աստուծո կողմե նշանակված պարտականություն կնկատեր:

Բոլոր մարգարեներու պես, և անոնցմե աստիճան մը ավելի, ախոյան էր ընկերային արդարության և ճշմարիտ աստվածապաշտության: Շարունակ կպատգամեր.

«Փոխեցեք ձեր ընթացքը. իրարու հետ արդար և ուղիղ ապրեցեք. օտարականը, որբը և այրին մի հարստահարեք. արդար և անմեղ արյուն մի թափեք. օտար աստվածներու ետևե մի երթաք ի կործանումն ձեր անձին» (Երմ. Է 1—6. Բդդ. Ե 25—29):

Ապրած ըլլալով եղերական շրջանի մը մեջ, և պարտավորված ըլլալով իր հայրենասիրական զգացումներուն հակառակ պատգամներ տալ, Երեմիա դարձած էր շատ զգայուն հոգի մը: Ջաղկելով հանդերձ անոնց անօրենությունները, շարունակ կբարեխոսեր իր ժողովուրդին համար առաջի Աստուծո: Այն աստիճանի հասավ իր ժո-

ղովուրդին ամբարշտությունը, որ Աստված այս մխիթարութենեն ալ զրկեց զայն. «Այլևս մի աղոթեր այս ժողովուրդին համար. անոնց վրա ողորմություն մի խնդրեր. մի բարեխոսեր անոնց համար, որովհետև այլևս պիտի չլսեմ քեզի: Չե՞ս տեսներ ինչեր կպատահին Հրեաստանի քաղաքներուն և Երուսաղեմի փողոցներուն մեջ...»: Ամեն կողմ տարածված էր կռապաշտությունը. ու կշարունակե Աստուծո ձայնը. «Կկարծե՞ս որ այս կերպով զիս կբարկացնեն. ոչ. այլ իրենք զիրենք կանարգեն, ծածկելով իրենց անձերը ամոթով» (Երեմ. Է 16—20):

Տեսնելով իր ժողովուրդը անդառնալիորեն մոլորած՝ և նախատեսելով անոնց գլխուն գալիք չարիքները հաճախ ինքզինքը կուտար լացի և ողբի: Արդարև ունի իր գիրքին մեջ բազմաթիվ ողբեր և իրեն կվերագրվի «ՈՂԲ ԵՐԵՄԵԱ» կոչված գիրքը: Սերտ նմանություններ կան իր և Հովբի միջև. իր գիրքին Ի գլուխին 14—18 համարները կհիշեցնեն Հովբին անեծքը իր ծնած ըլլալուն համար, իսկ նախորդ համարները՝ անոր տրտունջները:

Այս բոլորով մեկտեղ ամբողջ իր կյանքի և վիշտերու ընթացքին սերտորեն և շարունակաբար ինքզինքը կապված զգաց Աստուծո հետ: Իր նախատեսությունը Երուսաղեմի կործանման և իր լացը անոր վրա ու մանավանդ իր տառապանքները և վիշտերը իր ժողովուրդին համար և հուսկ ապա անոնցմե քարկոծվելով մեռնիլը հարմարապես զինքը կկացուցանեն նախատիպը Քրիստոսի:

Երեմիա կտոնվի առանձինն, Վերափոխման հաջորդող երկրորդ հինգշաբթին: Հույնք և լատինք մայիս 1-ին:

27.—ԵԶԵԿԻԵԼ

Թեև ժամանակակից է Երեմիա մարգարեին, սակայն որքան շատ և ստույգ էին մեր գիտցածները Երեմիայի մասին, նույնքան քիչ և անորոշ են մեր տեղեկությունները Եզեկիելի մասին: Աստվածաշունչի ոչ մեկ ուրիշ գիրքին մեջ հիշված է ան, իսկ իր մեծկակ գիրքին մեջ շատ քիչ բան ըսված է իր մասին: Իր անունն անգամ լոկ երկու անգամ հիշված է իր գիրքին մեջ, ընդդեմ Երեմիայի անվան ավելի քան տասը անգամ հիշատակության:

Եզեկիելի մասին մեր ամբողջ գիտցածը խտացած է իր գրքին սկիզբի քանի մը համարներուն մեջ ըստ հետևյալի:

«Երեսներորդ տարին, չորրորդ ամսվան հինգին, երբ ես Քոբար գետի ափին գրտնըված աքսորականներու մեջ էի, երկինքը բացվեցավ ու ես Աստուծո տեսիլքը ունեցա: Այդ տարին Հովաքին թագավորին գերության հինգերորդ տարին էր: Եվ Աստուծո խոսքը եկավ Եզեկիել քահանային, Բուզիի որդի, Քաղդեացվոց երկրին մեջ, Քոբար գետի ափին, և հոն Տիրոջ ձեռքը իմ վրաս եղավ» (Եզկ. Ա 1—3):

Վերոհիշյալ «Երեսներորդ տարին» մենք կհասկնանք իբրև իր տարիքը, այսինքն երբ երեսուն տարեկան էր: Քոբար գետը կնկատվի Եփրատի մեկ ջրանցքը, Բաբելոնի մոտ: Իսկ Հովաքին թագավորը Երուսաղեմի վերջընթեր թագավորն է, որ նախքան Քրիստոսի 597 թվականին գերի տարվեցավ Բաբելոն Նաբուգոդոնոսոր թագավորի կողմե ամբողջ արքունի անձնակազմով, ժողովուրդի մեծամեծներով և քաղքենի դասակարգով, ընդամենը ավելի քան տասը հազար հոգի. (Դ Թգ. ԻԴ 10—16): Ուրեմն ասոնց մեջն էր նաև Եզեկիել քահանան: Որով իր մարգարեական կոչումը տեղի կունենա 592 թվականին, Ն. Ք. Բաբելացվոց աշխարհին մեջ, աքսորական վիճակի մեջ:

Աստված կըսե իրեն. «Որդի մարդո. (Եզեկիելի համար շարունակ այս կոչումը կը գործածվի իր գիրքին մեջ, շուրջ 87 անգամ) Ես քեզ կղրկեմ Իսրայելին, ապըստամբ ժողովուրդի մը... Երբ ըսես անոնց. «Այսպես կըսե Տերը», պիտի հասկնան որ մարգարե մըն ես դուն անոնց մեջ, հոգ չէ թե քեզի մտիկ ընեն կամ մերժեն լսել քեզ, որովհետև ըմբոստ ժողովուրդ մըն է. բայց դուն, մարդու որդի, պետք չէ վախնաս անոնցմե, կամ անոնց խոսքերեն, թեև անոնք պիտի ըմբոստանան քեզի դեմ, և դուն ինքզինքդ պիտի զգաս կարիճներուն մեջ. երբեք պիտի չվախնաս ինչ որ ալ ըսեն քեզի, և անոնց սպառնալից կերպարանքեն պիտի չզարհուրիս: Պիտի տաս իմ պատգամներս անոնց, անոնք լսեն կամ մերժեն լսել: Սակայն դուն, մարդու որդի, պետք է լսես իմ պատգամներս և անոնց պես ապըստամբ չըլլաս: Բաց բերանդ ու կեր ինչ որ կուտամ քեզի:

Ու ես տեսա ձեռք մը որ դեպի ինձի կ'երկարեր, գիրք մը բռնած. բացավ զայն իմ առջևս... գրված էր ամբողջությամբ ներսով և դուրսով և կպարունակեր ողբեր, եղերերգ և վայեր: Հետո ըսավ ինձի. մարդու որդի, կեր քեզի մատուցվածը, կեր գիրքը, ապա գնա և խոսե Իսրայելի որդիներուն: Ուստի բացի բերանս, ու ան ջամբեց ինձի գիրքը: Եվ ավելցուց. մարդու որդի, կլլե քեզի տրված ա՛ս գիրքը, և որովայնդ թող լեցվի անով: Ու ես կերա զայն, մեղրի պես անուշ էր» (Բ 3—9 և Գ 1—3):

Վերջին պատկերալից խոսքին իմաստն էլ այն է, թե ինք սիրով և քաղցրությամբ կհամակերպեր Աստուծո կանչին, թե իսկ իր պարտականությունը ըլլար ողբալ այս ժողովուրդին ըմբոստ նկարագիրը և վայեր կարդալ հարկադրվեր անոնց հասցեին:

Ու կ'եզրակացնե աստվածային ձայնը. «Մարդու որդի, դիտող կարգեցի քեզ Իսրայելի տան վրա. ինձմե պատգամներ պիտի լսես և պիտի զգուշացնես զանոնք, եթե անօրենին ըսեմ թե անպատճառ պիտի մեռնիս, ու դուն չզգուշացնես, զայն, որ դառնա իր չար ճանապարհեն, այն անօրենը արդարև պիտի մեռնի իր անօրենության համար, սակայն անոր արյունը քեզմե պիտի պահանջվի: Իսկ եթե դուն զգուշացնես անօրենը, ու ան չդառնա իր չար ճանապարհեն, պիտի մեռնի թեև իր անօրենության պատճառով, բայց դուն ազատ պիտի մնաս մեղադրանքե» (Գ 16—21):

Եվ իրարու կհաջորդեն խորհրդավոր և պատկերալից տեսիլքները, ազդարարությունները և գուշակությունները հատկապես Երուսաղեմի կործանման և շրջակա յոթը ազգերու դեմ: Նշանավոր է հատկապես Եզեկիելի տեսիլքը չորցած ոսկորներու, որոնք աստվածային շունչով կվերակենդանան և հարություն կառնեն (գլուխ ԼԷ):

Քառասունութ գլուխներե բաղկացած իր գիրքին մեջ չկա այլևս ոչ մեկ ակնարկություն իր կյանքին վերաբերյալ: Իր վախճանի մասին ալ ոչինչ գիտենք: Հայսմավուրքյան ավանդության մը համաձայն մեռած ու թաղված է Բաբելոնի մեջ, սպանվելով իր ազգակիցներեն:

Իր դատապարտող պատգամներու կարգին Եզեկիել ունի նաև հուսալից և դրական տողեր: Օրինակ, կմարգարեանա, որ թեև իսրայելացիներ գերի պիտի տարվին օտար երկիրներ, բայց Աստված կըսե, վերստին «Պիտի ժողովեմ զձեզ այն երկիրներեն, ուր ցրված եք և վերստին պիտի տամ ձեզի Իսրայելի երկիրը: Ու երբ վերադառնան իրենց երկիրը, պիտի վերցնեն մեջտեղեն կռապաշտության գարշելի գործերը և պղծությունները: Անոնց տարբեր սիրտ մը պիտի տամ, և անոնց մեջ նոր ոգի մը պիտի դնեմ: Պիտի հանեմ անոնց մեջեն քարեղեն սիրտը և պիտի տամ անոնց մսեղեն սիրտ, որպեսզի իմ հրամաններուս համաձայն ընթանան, օրենքներս սահեն և գործադրեն: Ու անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան և Ես՝ անոնց Աստվածը» (ԻԱ 16—21):

Եզեկիելն է ըսողը Աստուծո կողմե. «Մեղավորին մահը չէ, որ կուզեմ այլ՝ անոր դառնալը չար ճանապարհներեն և վերապրիլը» (ԼԳ 11): Հիավոր են իր մարգարեությունները ժողովուրդի «Հովիվներուն» դեմ» (ԼԴ գլուխ): Գրքին վերջին գլուխները կպարունակեն մարգարեություններ իր ժողովուրդի փրկության և վերակազմության: Որչափ ալ շեշտը կդնե անհատի պատասխանատվության վրա, իր անկումին կամ բարձրացումին մեջ, բայց մյուս կողմե կհավատա իր ժողովուրդի հավաքական բնույթի կարևորության: Այս իրողությունը ի հայտ կուգա երբ այնքան մանրամասնորեն կնախատեսե իր վերածնյալ ժողովուրդի պաշտամունքին ձևերը (գլուխ Խ—ԽԸ):

Նոր Կտակարանին մեջ ոչ մեկ ուղղակի մեջբերում կա Եզեկիելեն. սակայն իր գիրքին մեջ նախատեսված քահանայական և մարգարեական ոգիի միացյալ ներկայացումը կկազմե այն հատակը որուն վրա կկառուցվի Ավետարանի վերանորոգյալ կրոնքը:

Եզեկիել կտոնվի Եզրի և Հովհ.-ի հետ Զաքարիայի հետ, Վերափոխման հաջորդող երրորդ երեքշաբթիին:

Հույնք՝ հուլիս 23-ին՝ լատինք՝ ապրիլ 10-ին:

28.—ԴԱՆԻԵԼ

Եզեկիելի պես Դանիել ալ մեջն էր այն գերիներուն, որոնք Բաբելոն տարվեցան 597 թվին Ք. Ք., իրենց թագավորին և մեծամեծներուն հետ: Դանիել շատ երիտասարդ էր գերի տարված ատեն, այնպես որ ինք ալ մաս կազմեց այն տղաքներուն, որոնք ընտրվեցան Իսրայելացի գերիներու մեջեն դաստիարակվելու և ի վերջո պետական պաշտոններու վրա դրվելու համար: Այս տղաքները պիտի ըլլային, ըստ արքայական հրահանգին, «Թագավորական կամ իշխանական տուներե, գեղեցիկ տեսքով, մարմինով անթերի, իմաստության հակամետ և գիտության ատակ, ուշիմ և հարմար՝ արքունական պաշտոնավարության:

«Ասոնք պիտի դաստիարակվեին Քաղդեացվոց լեզվով և դպրութեամբ» (Դատ. Ա 3—7): Պիտի ուտեին արքայական սեղանեն. իրենց դաստիարակությունը երեք տարի պիտի տևեր, որմե վերջ պիտի մտնեին պետական ծառայության: Դանիելի հետ էին նաև երեք ընկերները. Անանիա, Ազարիա և Միսայել, որոնց անունները փոխեց իրենց վերակացուն և տեղական անուններ դրավ. Դանիելին տվավ Պաղտասար անունը. Անանիային՝ Սեդրակ, Ա-

զարիային՝ Աբեդնագով, Միսայելին՝ Միսաք:

Սակայն Դանիել և իր երեք ընկերները իրենց միտքը դրած էին չհրաժարիլ իրենց հայրենի կրոնքեն և օրենքներեն, և նախատեսելով որ արքայական սեղանի վրա պիտի մատուցվեին հրեական օրինաց հակառակ կերակուրներ, ուստի իրենց վերակացուեն խնդրեցին, որ իրենք կերակրվին լոկ ընդեղենով և բանջարեղենով և ջուր գործածեն գինիի տեղ: Տասը օրվան փորձե մը վերջ վերակացուն երբ տեսավ որ բանջարեղենով և ջուրով սնանողները ավելի առողջ երևույթ ունեին քան խորտիկներով և գինիով կերակրվողները, ընթացք տվավ անոնց խնդրանքին:

Դանիելի գրքին մեջ կան բազմաթիվ հետաքրքրական և սրտագրավ միջադեպեր, զորս անկարելի է մի առ մի հառաջ բերել, որոնք սակայն կհաստատեն Դանիելի աստվածային իմաստությամբ լեցված ըլլալը, և նախախնամական բացառիկ պաշտպանություն վայելելը: Օրինակ, միջադեպը Շուշան անուն անմեղ կնոջ մը, որուն աչք կտնկեն երկու վատաբարո ծերունիներ, որոնք զրպարտանքի սպառնալիքով կպահանջեն իրենց հետ ըլլալ: Կինը աչք կ'առնե զրպարտվիլ ու քարկոծվիլ քան թե մեղանչել Աստուծո առջև: Ծերերը կզրպարտեն զայն ժողովուրդին առջև և քարկոծման որոշում հանել կուտան: «Սակայն Աստված իր հոգին արթնցուց Դանիել երիտասարդին վրա», որ դեպքին միջամտելով պահանջեց երկու ծերերը առանձին-առանձին քննության ենթարկել: Ժողովուրդի առջև իր իսկ կատարած հարցաքննությամբ հակասություններ բռնեց անոնց վկայությանց մեջ և փոխան անմեղին քարկոծվեցին սուտ վկայություն տվող մեղապարտները:

«Դանիել մեծ անուն հանեց այն օրեն սկսյալ» (գլուխ ԺԳ):

Սակայն Դանիելի համբավը և բարձրացումը առավելաբար սկսավ երբ մեկնեց Նաբուգոդոնոսոր թագավորի մեկ երազը, զոր չէին կրցած մեկնաբանել անոր «գիտնականները, մոգերը, կախարդները և աստղագետները» (գլուխ Բ):

Բարձրացումը նախանձ ստեղծեց Դանիելի հանդեպ պետական բարձր շրջանակներու մեջ. ու չկարենալով զրպարտիչ պատճառանքներ գտնել այլ մարզերու մեջ, քանի որ Դանիել անկաշառ, կարող և իմաստուն պետական պաշտոնյա մը էր, դպյան անոր կրոնքին: Հրահանգ հանել տվին թագավորեն, թե ով որ երկրի աստվածներեն զատ ուրիշ աստվածներ պաշտե, առյուծներու գուբը պիտի նետվեր: Դանիել իր տան մեջ վերնատուն մը շինել տված էր, որուն պատուհանները Երուսաղեմի կողմը բացված էին: Ամեն օր, Երուսաղեմ դարձած օրական երեք անգամ անխափան աղոթք կըներ այնտեղ: Այս պարագան հանձնեցին թագավորի նկատառման: Թագավորը ստուգելե հետո իրականությունը, հարկադրվեցավ հրամայել որ նետեն զայն առյուծներուն գուբը: Հաջորդ առավոտ կանուխ թագավորը անձամբ գուբին գլուխը եկավ սգալու համար Դանիելը, զոր կսիրեր և որուն վրա մեծ համարում ուներ: Կանչեց թագավորը վերեն «թախծությամբ. Դանիե՛լ, Աստուծո ծառա, արդյոք կրցա՞վ ազատել քեզ առյուծներու բերանեն քու Աստվածդ, զոր միշտ կպաշտեիր: Դանիել պատասխանեց. Արքա, հավերժ ապրե, իմ Աստվածս ղրկեց իր հրեշտակը և գոցեց առյուծներուն բերանը և ինձի վնաս չհասցուցին, որովհետև սիրտս ուղիղ էր Անոր հետ, և քեզի դեմ ալ որևէ հանցանք չեմ գործած, Արքա: Այն ատեն ուրախացավ թագավորը և հրամայեց հանել Դանիելը գուբեն. և անոր վրա ոչ մի վնաս նշմարվեցավ, որովհետև իր հավատքը ամրորեն դրած էր իր Աստուծույն վրա»: Չարախոսները նետվեցան գուբին մեջ և լափվեցան առյուծներեն (գլուխ Զ):

Շեշտված նմանություններ կան Հովսեփ Գեղեցիկի և Դանիելի միջև:

Երկուքն ալ գերի տարվեցան օտար երկիրներ իրենց մատաղ երիտասարդության և տիպար երիտասարդներ դուրս եկան և բարձրագույն դիրքերուն տիրացան:

Երկուքն ալ անարդարությանց ենթակա եղան, որոնցմե դուրս եկան փորձված, ու ավելի հոկված: Երկուքին ալ բարձրացումները սկսան երազներու մեկնությամբ: Երկուքն ալ անարատ կյանք ապրեցան ապականյալ հեթանոս շրջանակներու մեջ: Երկուքն ալ մեռան իրենց հայրենիքեն հեռու օտար երկիրներու մեջ:

Դանիել Եսայիի տիպարեն մարգարե մը եղավ. այսինքն որքան պետական մարդ՝ նույնքան և ավելի Աստուծո մարդը: Իր գիրքին վերջին կեսը խորհրդավոր և պատկերալից տեսիլքներ կան, որոնք պատուելով ապագայի թանձր վարագույրը, լույս կսփռեն գալիքին և Աստուծո ծրագիրներուն վրա: Հայտնութենական նկարագիր ունին իր տեսիլքները:

Նոր Կտակարանի մեջ առնվազն մեկ անգամ հիշված է Դանիել Քրիստոսի վերջին հայտնութենական քարոզին մեջ (Մարկ. ԺԳ 14): Իսկ իր տեսիլքներուն մեջ երևցած «Մարդու Որդին», որուն «տրր-

վեցավ իշխանություն և պատիվ ու արքայություն, և որուն պիտի ծառայեն բոլոր ազգեր և լեզուներ, և որուն իշխանությունը հավիտենական է և անոր թագավորությունը անպակասելի է». տառապես կնույնանա Նոր Կտակարանի «Մարդու Որդիին», Քրիստոսի հետ:

Դանիել կտոնվի մեր եկեղեցիին մեջ իր երեք ընկերներով, Հոգեգալուստին հաջորդող չորրորդ շաբթվան երեքշաբթի օրը: Հույներ ալ մեզի պես կտոնեն զայն Երից մանկանց հետ, դեկտ. 17-ին: Իսկ լատինք՝ առանձին՝ հուլիս 21-ին:

29.—ՈՎՍԵ

Ովսեով կսկսվի տասներկու Փոքր կոչեցյալ մարգարեներու շարքը: Ովսե կապրի և կմարգարեանա Ն. Ք. ութերորդ դարուն:

Արդարև նախքան Քրիստոս ութերորդ դարը հարուստ է մարգարեներով: Այս դարուն մեջ կապրին և կգործեն Եսայի, Հովնան, Միքիա, Ամովս և Ովսե: Իր մասին գրեթե ոչինչ գիտենք. ուստի գեթ հարևանցի ծանոթանանք իր կրոնական մտածումներուն, որոնք տրված են տասնչորս գլուխներե բաղկացյալ իր գիրքին մեջ:

Ամենեն հատկանշական երևույթը այս մարգարեին մոտ՝ իր դժբախտ ամուսնությունն է: Մարգարեները, իրենց պատգամները մտքերու մեջ անջնջելի կերպով գամելու և զանոնք տպավորիչ դարձնելու համար, Աստուծո հրամանով հաճախ կդիմեին արտասովոր և տրամադիկ միջոցներու: Օրինակ, մեկը բոկոտն և մերկ կպտտեր փողոցներու մեջ, ըսելու համար որ այս կերպով գերի պիտի տարվեին օտար երկիրներ: Ուրիշ մը եզան լուծ կկրե իր պարանոցին վրա, ըսելու համար որ լավ է այսինչ թագավորին լուծին տակ մնալը: Իսկ Ովսե ալ պոռնիկ մը կնության կառնե, պատգամելու համար որ Իսրայել պոռնկացած է:

Աստվածաշունչին մեջ, Աստուծո հանդեպ ցույց տրված անհավատարմությունը առհասարակ կկոչվի պոռնկություն: Ըսել կուզեր մարգարեն, թեև ամուսնացած եմ այս կնոջ հետ, բայց իրականին մեջ իմ կինս չէ ան, քանի որ ինծի անհավատարիմ է և ուրիշներու հետ կկենակցի. այնպես եք նաև դուք, ով Իսրայելացիներ. թեև Աստուծո հետ ուխտ կնքած եք, բայց օտար աստվածներ կպաշտեք:

Այս կնոջմե ծնած զավակներուն ալ խորհրդավոր անուններ կդնե. առաջինը կկոչե «Եզրայել», հիշեցնելու համար օրվան թագավորական գերդաստանի Հեու զորավարին արյունահեղությունը զոր ըրած էր ԵԶՐԱՅԵԼԻ մեջ, բնաջնջելու համար Աքաաբ կռապաշտ թագավորի ընտանիքը: Հանի որ օրվան թագավորներն ալ կռապաշտության մեջ ինկած էին հետևաբար անոնք ալ նույն դատաստանով պիտի պատժվեին: «Պիտի դադրեցնեմ Իսրայելի թագավորությունը» կըսե Աստված մարգարեին բերանով. ինչ որ արդարև տեղի ունեցավ 722 թ. Ն. Ք.:

Երկրորդ զավակը կոչեց «ՉՈՂՈՐՄՅԱԼ». որովհետև այլևս «պիտի չողորմեմ Իսրայելի», կըսե Աստված:

Երրորդը կկոչե «Ոչ-ժողովուրդ իմ». հայտարարելու համար, որ Իսրայել դադրած է այլևս Աստուծո ժողովուրդը ըլլալե:

Արդարև Ովսեի գիրքին մեծագույն մասը Իսրայելի անհավատարմություններուն ձաղկումն է, իսկ վերջին գլուխը կոչ մըն է ապաշխարանքի, ապագայի երջանկության խոստումներով ընդելուզված, եթե սրտանց վերադառնային Աստուծո:

Բոլոր մարգարեներն ալ պատկերալից լեզու կգործածեն, անոնցմե շատ կան Ովսեի գիրքին մեջ, օրինակներ:

«Հաղորդ կուոց» կռապաշտ ըսելու տեղ:

«Նկան չդարձուցեալ». մեկ կողմե միայն եփված նկանակ, հաց. այսինքն իր սրտին մեկ կողմը միայն և ոչ թե ամբողջապես— Աստուծո տրված:

«Կերան օտարք զզօրութիւն Իսրայէլի». այսինքն Իսրայել տկարացած և հյուծած է օտարներու հետ խառնակեցությամբ:

«Ընկղմեցաւ Իսրայէլ». կորսնցուց իր ազգային ինքնությունը, կրոնական նկարագիրը:

«Անօթ անպիտան». անպետ առարկա, ոչնչություն:

«Կշիռ անիրաւութեան». առևտրի մեջ խաբեբա:

Հույնք՝ հոկտ. 17-ին: Լատինք՝ սեպտ. 1-ին:

Երկոտասան մարգարեից հիշատակը կկատարենք Ծննդյան Գ կիրակիի հաջորդող Գշ. օրը:

30.—ՀՈՎԵԼ

Իր մասին ալ գրեթե ոչինչ գիտենք բացի անունեն և հայրանունեն, որոնք արդարև բոլոր մարգարեական գիրքերուն սկիզբը դրված են: Իր գրության ոճեն և ակնարկություններեն դատելով կկարծվի որ մարգարեացած է Երուսաղեմի մեջ, Ե դարուն Ն. Ք., այսինքն Իսրայելական գերութենեն հետո:

Իր մարգարեության առիթ տված է մարախներու աննախընթաց պատուհաս մը, որուն հաջորդած է երաշտ մը, չորություն մը, զորս Հովել նկատած է իբրև աստվածային պատիժ և խորհրդանշան «Տիրոջ օրվան» և առիթ նկատած է այս երևույթները ժողովուրդը ապաշխարանքի հրավիրելու:

Իր գրքույկը կբաղկանա երեք գլուխներե, որոնց առաջինը վերոհիշյալ պատուհասներու բանաստեղծական նկարագրությունն է. երկրորդ գլուխին մեջ այս պատուհասները կնկատե իբրև ազդարարները և խորհրդանշանները «Տիրոջ օրվան», որ բանալի բառն է գրքույկին, զոր կնկարագրե աճավոր գույներով: Իսկ վերջին գլուխը Աստուծո դատաստանն է հզոր ազգերու, որոնք անիրավություն կընեն փոքր ազգերուն: Այս վերջիններուն արդարություն պիտի ըլլա, եթե շարունակեն հավատարիմ մնալ Աստուծո օրենքներուն: Գիրքը գրված է ուժեղ և նկարագեղ ոճով:

Կնախատեսե, որ պիտի գա ժամանակ, երբ Աստված իր հոգին պիտի թափե ամեն մարդու վրա, մեծին և փոքրին, այր մարդուն և կնոջ, առանց որևէ խտրության (Բ 23—32): Այս հատվածը մեջ բերավ Պետրոս առաքյալ, բացատրելու համար Հոգեգալստյան հրաշալի երևույթը, իբրև իրականացումը այս մարգարեական նախատեսության:

Հույնք՝ հոկտ. 19-ին: Լատինք՝ հուլիս 13-ին:

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպոլ, 1977, էջ 95—108)